ՆՈՐ-ԴԱՐ

№ 222 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Երեքշաբթի, 14 Դեկտեմբերի 1893 Երեքշաբթի, 14 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 222

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լրտուներով։
Յայտարարութիւնների տարին 2 կոպ., րնկերմների համար կրկնապատիկ։

ԱՌԱՋԻԿԱՅ 1894 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԸՄԲՆՕՐԵՐԷՑ ԹԵՐԹԷ

Թիֆլիսում

Կրհրատարակւի նոյն դիրքով եւ ծրագրով ամեն օր, բացի կիրակի եւ տօներին հետեւող օրերից։

(Յարուայ ընթացքում ,,Նոր-Դար“-ը լոյս կըտեսնի առնուազն 220—225 անգամ)

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ը ՍՏԱՆՈՒՄ Է ԵՒ ՍԵՊՀԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, Թիֆլիսից դուրս ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում՝ 5 կոպ.։

ԵՒՐՈՊԱՅի, ԹԻՒՐՔԻԱՅի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՅի բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլլար։

Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում ամեն օր «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Պուշկինսկայա փողոցում, Սկուերի դիմաց։

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեանը՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Redaction du journal «Nor-Dar»։

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Կանանց խնդիրը հայերի մէջ, Ա.։
Քրոնիկոն.—Սրբ. Աղուանեանի մասին։ Շուչու օր. գպրոցի աշակերտուհիների նուէրը։ Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը։ Թիֆլիսի քաղ. վարչ. անդամների հաստատութիւնը։ Ալէքսանդրը Ղազրէգ։ Թէյի տնկարաններ Երկաթուղի Ախալցխայից մինչև Կարս։ Ալէքսանդրապոլից։ Սարովից։ Միհաննայից։ Գետաշէնից։
Արտասահմանի հայ թերթերից։
Դրիդրիս արքեպիսկ. Աղուանեան։
Մի քանի խօսք մեր հոգևոր գպրոցների մասին։
Թղթակցութիւններ.—Ղ-Ղալա։ Ալէքսանդրապոլ։
Քաղաքական.—Եւրոպական մամուլի կարծիքն անիչխանականների մասին։
Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 13 դեկտեմբերի 1893 թ.

ԿԱՆԱՆՑ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Ա.

Ներկայ դարը, որ իւր վախճանին է մօտենում և միւս դարերի հետ համեմատած դրական գիտութիւնների ասպարիզում մեծ առաջադիմութիւն է արած, որ հարուստ է գիտութեան զանազան ճիւղերում ցոյց տուած աչքի ընկնող արդիւնքներով և, մեր կարծիքով, աւելի նրանով է առաջադէմ, որ լուսաւորուած մարդկութիւնն աւելի շատ և հիմնաւոր միջոցներ ունի լիովին ըմբռնելու, թէ գիտութիւնն իւր բոլոր ճիւղերով դրեթէ գանւում է այսօր դեռ իւր մանկական հասակի մէջ—այս լուսաւոր գաղն արբեցնող, բթացնող և անբարոյականացնող ներգործութիւն ունի լետ ընկած, խաւարի մէջ ընկղմած ազգի վրայ, ինչպիսին է հայոց ազգը։

Պատմական, աշխարհագրական և այլ հանգամանքների շնորհիւ արևելեան մի ընդունակ և դէպի լոյսը ձգտող ժողովուրդ, ինչպիսին է հայոց ժողովուրդը, լուսաւորութեան և քաղաքակրթութեան ասպարիզում եւրոպական ազգերի հետ համահաւասար քայլերով չէ կարողացել առաջադիմել. նա զրկուել է սեպհական կուլտուրայից, զուրկ է մնացել կանոնաւոր՝ այսինքն միակ ճշմարիտ քաղաքակրթութիւնն ապահովող զարգացումից։

Այդ դրութեան մէջ գտնուող հայ ժողովուրդը ներկայ տասնևինն-երորդ դարու եւրոպական քաղաքակրթութեան խիստ հոսանքին հանդիպելով անպատրաստից, թէպետև ինքը զգում է իւր երակների մէջ Չինգիզխանի և Լենկթեմուրի ժամանակների ստրկական ոգին, բայց թուլէք անելով խրւում է արևմտեան քաղաքակրթութեան ցեխի մէջ....

Կանոնաւոր զարգացումից և կրթութիւնից զուրկ հայ ժողովուրդը՝ մտածելով որ հրեշտակները մերկ են լինում, երևակայում է, թէ Օֆենբախի օպերետների հերոսուհիներն անմեղ հրեշտակներ են և նա միանգամից մէկ շունչով ընդունում է թէ Նէքռսպիերի՝ «Համլէտին», թէ Զոլայի՝ «Նանային». նրա հասկացողութեամբ դրանց մէջ ոչ աստիճան կայ և ոչ էլ տարածութիւն։

Այսպէս է լետ մնացած, սեպհական քաղաքակրթութիւնից զուրկ, անցղական դրութեան մէջ գտնուող ժողովուրդների ճակատագիրը։ Նրանք դատապարտուած են ձևը (ֆորմը) ընդունելու քովանդակութեան փոխարէն, կճեպը վայելելու պտուղի տեղ։

Եւ այդ վիճակի մէջ գտնուող ժողովրդին շրջապատող թանձր խաւարի մէջ աճում են մի տեսակ մրջիւններ, որոնք ապրում և սնունդ են ստանում գերեզմանատան դիակներից և բազմանում են։

Այդ մրջիւնները, երբ լոյսի են հանդիպում, այն են անում, ինչ որ մենք ականատես եղանք Ֆրանկֆուրտ քաղաքի էլէքտրական ցուցահանդէսին։

Ամբողջ ցուցահանդէսը հազարաւոր էլէքտրական լամպիոններով լուսաւորուած է։ Մի մեծ և փառաւոր լամպիոնի շուրջը, որ արեգակի պէս լոյս էր տալիս, մի քանի միլիոնաւոր մրջիւններ պտոյտներ են անում, ասես թէ լոյսն անչափ սիրելով նրան ուզում են լափշտակել, կլանել։

Մտածմունքի մէջ խորասուզուած դիտում ենք թէ ինչով պիտի վերջանայ մրջիւնների դէպի լոյսը մրցած այդ բուռն սիրոյ արշաւանքը։

Միլիոնաւոր մրջիւնները հետզհետէ էլէքտրական լոյսի մէջ ընկան և խանձուեցան, և մի փոքր էլ—արեգակի պէս լուսաւորուած լամպիոնը հանգաւ։

Չենք թագցնում, այդ տեսարանը մեզ շատ տխրեցրեց. դա լիշեցրեց մեզ մեր ժողովրդի ալժմեան դրութիւնը։

Մեր ժողովրդի այն դրութիւնը, որ վերը նկարագրեցինք, ծնեցնում է մի կարգ ինքնակոչ հրապարակախօսներն, որոնք եւրոպական քաղաքակրթութեան իմաստն ըմբռնելու անընդունակ, կճեպը պտուղի տեղ ընդունելով՝ ազատասիրութեան անունով գոռում-գոչիւն են բարձրացնում և՛ միամիտներին և՛ լիմարներին մոլորեցնում են։

Առանց մարգարէ լինելու գուշակելով պիտի ասենք, որ այն ճշմարիտ լոյսը, որ հայութեան աշխարհում վառում են եւրոպական ճշմարիտ կրթութիւն ստացած և մեր ազգի ներկայ դրութիւնը և կարիքը հասկացող մարդիկ—պիտի հանգչի Ֆրանկֆուրտի էլէքտրական լամպիոնի պէս՝ շնորհիւ այդ լոյսի շուրջը հաւաքուող մրջիւնների։

Այդպէս եթէ առաջ գնալ, հայոց ազգութեան համար յաւիտենական խաւարն անխուսափելի է։

Ահա այդ խաւարի դէմ ենք կռուել մենք և պիտի կռուենք։

Մենք սպասում ենք և այն յուսով ենք ապրում, որ բոլոր հասկացող և իւր ազգի իսկական շահերին նուիրուած հայերը, իրենց ազգի կանոնաւոր զարգացման բարեկամները՝ հասակն առած մարդիկ թէ երիտասարդներ, այր թէ կին մեզ հետ կըխմբուին, մեզ աջակից կըլինեն կռուելու այդ խաւարի դէմ։

Քաղաքական-դրականական ամենօրեայ թերթ «Նոր-Դար»-ը չի կարող կանանց դրութիւնն անտես առնել, քանի որ նա իւր գոյութեան օրից ազգային լուսաւորութեան տասպարիզում կնոջ և տղամարդու մէջ սկզբունքով խտրութիւն չէ արել և իւրաքանչիւրին իւր տեղն է տուել։

Ա Զ Դ.

Առաջիկայ 1894 թուի համար «Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը բացուած է եւ նոր բաժանորդ գրուողը կըստանայ «Նոր-Դար»-ը բաժանորդ գրուելու օրից։

Խմբագրութիւնս յատուկ խընդրում է առաջիկայ 1894-ին «Նոր-Դար»-ը ստանալ ցանկացողներից, որ շտապեն բաժանորդ գրուել։

Մեծայոյս է խմբագրութիւնս, որ սովորական բաժանորդները թերթին վերստին բաժանորդ գրուելով կաշխատեն թերթը տարածել—եւ ուրիշներին բաժանորդ գրուել տալով։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Հեռագրով իմացրին Հին-Նախիջևանից, որ Նորին բարձր արքազնութիւն Ատրպատականի արքեպիսկոպոս Աղուանեանը վախճանուել է։ Հեռագրուեց, որ Կիւրեղ վարդապետ Սրապեանը գնայ Նորին Վեհափառութեան կողմից թաղմանը ներկայ լինելու։ Նորին Վեհափառութիւնը չատ վշտացած է, մանաւանդ որ Նորին Բարձր Սրբազնութիւնը չէր ուզում գնալ, պատճառելով իւր ծերութիւնը և տկարութիւնը։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Ատրպատականի վիճակի առաջնորդ նշանակուել է դերասուքիաս եպիսկոպոս Պարգեան, որը չուտով ճանապարհ կընկնի իւր պաշտօնատեղին։ Մի քանի հեռագրեր ստացաւ Նորին Վեհափառութիւնը թաւրիզից, որոնցով այնտեղի հայ հասարակութիւնը թախանձագին խնդրում է նշանակել իրենց առաջնորդ գերասուքիաս սրբազանին։ Նորին Վեհափառութիւնը չատ տխրած էր Նորին բարձր սրբազնութեան Աղուանեանի մահուամբ, բայց երբ Սուքիաս Սրբազանն ուրախութեամբ ընդունեց այդ պաշտօնը, կամաց-կամաց վերացաւ Նորին Վեհափառութեան տխրութիւնը։ Նորին Վեհափառութեան ամենից չատ վիշտ պատճառողը թեմերի թափուր մնալն է։

—

Նոյն տեղից.—Շուչու օրիորդաց հոգևոր դպրոցը, կատենալով արտայայտել իր աշակերտուհիների որպիսական ակնածութիւնը դէպի Նորին Վեհափառութիւնը, ուղարկել է մի ձեռագործ գորգ «Ոգի Հայաստանի», որ արդիւնք է նրանց անձնուէր աշխատասիրութեան։ Հոգաբարձութիւնը յանձնել էր այդ պ. Ա. Տէր-Միքելեանին, որ պաշտօնապէս ներկայացնէ Նորին Վեհափառութեան և արտայայտէ դպրոցական մարմնի բուռն զգացմունքները։ Նորին Վեհափառութիւնը չատ գոհ մնաց, մանաւանդ, որ այս գորգն աւելի գեղեցիկ էր, քան վեհարանում եղածը։ Նորին Վեհափառութիւնն օրհնեց և պատուիրեց մի օրհնութեան կոնդակ ուղարկել, այլ և նուիրեց իւր կենդանագիրը։

Օծման հանդիսին էլ կանանց հաստատութիւններից միմիայն այս դպրոցն ունէր իւր ներկայացուցիչը։ Այդ մեծ պատիւ է բերում թէ դպրոցին և թէ հոգաբարձութեան։

—

Նոյն տեղից.—Շուտով լոյս կըտեսնէ Նորին Վեհափառութեան օրհնութեան անդրանիկ կոնդակը, որ փոքր ինչ ուշացել է։

—

Թիֆլիսի պ. նահանգապետը հաստատել է քաղաքային վարչութեան անդամների—Ե. Խոսրովեանի, Ա. Իւանենկոյի և իշխ. Պ. Արղութեան-Երկայնաթաղուկի—ընտրութիւնը։

—

Դեկտեմբերի 10-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում վախճանուեց վրաց գրող Ալէքսանդր Ղազրէգը։ Հանգուցեալը վրաց առաջնակարգ գրողներից մէկն էր. վրաց ժողովրդական կեանքից առած տաղանդաւոր պատկերներից և վէպերից զատ, նա ունի նաև թատերական ինքնուրոյն և թարգմանական բազմաթիւ աշխատութիւններ։ Դէպի մայրենի թատրոնն ունեցած նրա սէրն այն աստիճան աստիկ էր, որ կարելի է ասել իւր ամբողջ կեանքը հենց դրա համար էր մաշել, առանց որևէ նիւթական ակնկալութիւն ունենալու թատրոնական գործից, որին նա մասնակցում էր նաև իբրև դերասան Մոխէ կեղծ անունով. նա ապրում էր վերին աստիճանի չքաւորութեան մէջ. բայց և այնպէս չէր դադարում մայրենի դրականութեանն ու թատրոնին ծառայելուց, մինչև որ, վերջապէս, երևի ուժերի աստիկ լարումից, մի քանի տարի առաջ հոգեկան անբուժելի հիւանդութիւն ստացաւ, և նրան տարան հիւանդանոց, ուր և կնքեց իւր մահկանացուն մաւսորապէս և ֆիզիքապէս ալդէն բոլորովին կազմալուծուած։ Հանգուցեալն ազնուական ցեղից էր։

Վրացիներն էլ հայերին հետեւելով՝ իրենց ճշմարիտ գործիչներին կենդանի ժամանակ անօգնական են թողնում, իսկ մահուանից յետոյ՝ պսակներով զարդարում նրա դագաղը։

—

Մայրաքաղաքի թերթերի ասելով, պետական կալուածների մինիստրութիւնը Կովկաս է ուղարկում պրոֆեսոր Կոստիչևին, որ Բաթումի շրջանում և ուրիշ տեղերում տոլեր պիտի հետազօտի

ՄԱՀՎԱՆԴՈՒԹԻՒՆ.—Ներքոյ հոգեպատ ի վերայ 16 տարեկան եղեալ Ջաւոյ որդւոյ Ղազարոսի Ղազարեանց, որ ի տան հօրն իւրոյ ի Կ. Պոլիս վճանափ մեռաւ, ի տեղւոջ նորին ամփոփեցաւ։ Ի ներկայութեան մերում ի գերեզմանատունն Սամաթիոյ ի վերայ գերեզմանին ասացաք զհոգեհանգիստ ըստ կարգի եկեղեցւոյ մերոյ։ Ապա ի տան հանգուցելոյն ի ներկայութեան հարազատաց եւ բազմաց ազգայնոց ասացաք զհոգեհանգիստ ըստ կարգի եկեղեցւոյ մերոյ։ Ապա ի տան հանգուցելոյն ի ներկայութեան հարազատաց եւ բազմաց ազգայնոց ասացաք զհոգեհանգիստ ըստ կարգի եկեղեցւոյ մերոյ։

ՄԱՀՎԱՆԴՈՒԹԻՒՆ.—Ներքոյ հոգեպատ ի վերայ Ջաւոյ որդւոյ Ղազարոսի Ղազարեանց, որ ի տան հօրն իւրոյ ի Կ. Պոլիս վճանափ մեռաւ, ի տեղւոջ նորին ամփոփեցաւ։ Ի ներկայութեան մերում ի գերեզմանատունն Սամաթիոյ ի վերայ գերեզմանին ասացաք զհոգեհանգիստ ըստ կարգի եկեղեցւոյ մերոյ։ Ապա ի տան հանգուցելոյն ի ներկայութեան հարազատաց եւ բազմաց ազգայնոց ասացաք զհոգեհանգիստ ըստ կարգի եկեղեցւոյ մերոյ։

ՄԱՀՎԱՆԴՈՒԹԻՒՆ.—Ներքոյ հոգեպատ ի վերայ 16 տարեկան եղեալ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ի.

Շարք։

Ես ուզում եմ ձեզ ասել մի քանի խոսք մեր ազգային ներկայ դրության մասին։ Ես ուզում եմ ձեզ ասել, թե ինչ է մեզ սպասում ապագայում, ինչ ենք մենք անելու, ինչ ենք մենք ուզում

ՕԴԵՍՍԱ.—Օդեսայի դատական պալատը հաստատեց այն մեղադրական ճառը, որով դատի է ենթարկւում հրէական «Դրէյֆուս» ֆիրմը, որ մեղադրւում է Սամարայի նահանգի սովեալ ժողովրդին հաց մատակարարելու գործի մէջ արած ղեղծումների մասին։ Այդ գործում մեղադրւում են 7 հոգի. կոչուած են 158 վկայ և 9 էքսպերտ։

ԲԵԼԳՐԱԴ.—Բարձրագոյն դատարանն սկսեց Աւետկումովիչի մինիստրութեան մեղադրութեան գործի քննութիւնը։

ԲԵՐԼԻՆ.—Դաշնակցական խորհուրդը որոշեց լիակատար իրաւունք տալ ֆինանսական վարչութեան ատեհանաւորներին՝ Ռուսիայից և Ֆինլանդիայից ներս մուծուող կամ այսուհետև ներս մուծուելիք ապրանքներից վերցնել ընդհանուր տարիֆ, եթէ միայն ապացուցուի, որ ապրանքները պատուիրուած են գերմանական հպատակների հաշուով այն պայմանների հիման վրայ, որոնք գոյութիւն ունէին մինչև մաքսերը սաստկացնելու մասին եղած կարգադրութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 11 դեկտեմբերի.—Առանձին յանձնաժողովի այն գումարից, որ մնացել է սովեալների օգտին հաւաքուած փողից, որոշուած է 1,200,000 ր. նոյն նահանգների չինական կառավարութիւններում վարկի 240 մանր գանձարաններ հիմնել։ Ֆինանսական մինիստրութեան յանձնաժողովը որոշել է, որ գիւղական հասարակական վարկի հիմնարկութիւնները կազմակերպեն բաժիններ կանոնաւոր երաշխաւորութեամբ։

ՊԱՐԻԶ.—«Temps»-ի մէջ հրատարակուած է Էմիլ Զոլայի մի յօդուածը Ռուսիայի և Ֆրանսիայի միջև գրականական դաշն կապելու օգտին։ Զոլան հաւատացած է, որ այդպիսի մի դաշն կապելը կախուած է ռուսաց մամուլի դէպի այդ խնդիրը համակրանքով վերաբերուելուց, և այդ պատճառով նա իւր խօսքն ուղղում է այդ մամուլին։

ՀՌՈՄ.—Դերվիշների մի զօրախումբ, որ կազմուած էր 6000 հրացանաւորներից և 4000 տէզաւորներից, Մահմէդ-Ալիի առաջնորդութեամբ՝ պատերազմ յարձակում գործել Հաբեշստանի իտալական ամրութիւնների վրայ։ Իտալական գնդապետ Ամիրոնդին անյապաղ յարձակուեց դերվիշների վրայ, և երկու ժամուայ պատերազմից յետոյ դերվիշները յաղթուեցան. սպանուածների թուում են ինքը Մահմէդ-Ալին և համարեա բոլոր էմիրները. 60 դրօշակ և մի ծոպաւոր սպանացինների ձեռքն են անցել։

ԲԱՐՑԵԼՈՆԱ, 12 դեկտեմբերի. — Ոստիկանութիւնը Կուհաս գիւղում անիշխանականների կատարեալ լաբորատորիա է գտել. դրաւուած են բազմաթիւ սրուակներ նիտրա-գլիցերինով և 40 պայթուցիկ ռումբեր։

ՎԻԵՆՆԱ. — Ծոսկանցի Ռիդոլետտո կոչուած կօչկակարի գործակատար Մրվան, որին պատգամաւոր Հերոլդը պարլամենտի հրապարակական նիստի ժամանակ գաղտնի ընկերութիւնների գործակալ էր անուանել, երէկ երեկոյեան սպանուած գտնուեց իւր տան մէջ, Պրագում։ Ընդհանուր կարծիքն այն է, որ Մրվան զոհ է գնացել Պրագի «ամլադինի» ձեռքով։

ԲՈՐՍԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 7 դեկտեմբերի

Մարհ. կուրսը, 3 ամսով, Լոնդոնում	10 ֆ	
ոսկեր. համար	93,85	սակ.
Թղթերի 100 մար.	48,85	—
Գարիզ 100 ֆրանկի.	37,22½	—

Մարհ. կարճ. տրամադրութիւնն ամուր է. Նոր կարած պոլումպ. 7,55 առք. 7,58 ծախ. Մաքսային կարոնը (100 մետալ ռուբլուն).

	151 առք.	151⅜	ծախ.
Արծաթը	—	—	
Բորսային վեղբը	5 մինչև	7%	
Պետ. բան. Ե. հրատ. 5% տոմս.	102⅝	սակ.	
2-րդ	102½	—	
1883 թուի 6% սակեայ բիլետը.	—	—	
1884 թուի 5% — —	162	առք.	
Արևելեան 2-րդ փոխ. 100 և 1000 բուբլիանոց 5% Բ. հրատ.	100⅝	—	
» » » Գ. հրատ.	101⅜	—	
1864 թ. Ե. ներքին փոխառու. վիճակահան. 5% տոմսեր	245½	սակ.	
1866 թ. Բ. » »	219⅜	—	
Արքունի երկաթուղային բիլետը	102½	—	
Ներքին փոխառ. 4% I սերիան	94⅜	—	
» » II սերիան	94⅜	—	
» » III սերիան	94⅜	—	
» » IV սերիան	94½	առք.	
4½% երկաթուղ. փոխ I հրատ.	99⅜	—	
» II հրատ. 1893 թ.	94⅜	առք. և 1893 թ.	
փոխառութեան	99½	—	
Ազն. կալ. բան. 5% գրաւաթ.	100⅜	—	
» » 4½% —	98⅞	առք.	
Արք. ազն. կալ. բան. 5% վճահանութեան տոմսերը	188	սակ.	
4½% չինական հող. բանկի վկայ.	98⅞	—	
Հարաւ-Արեմտեան երկաթուղ. 4% օբլիգացիան	91⅜	—	
Մոսկուա-Բիազանի	91½	—	
Բիազան-Ուրալի	98⅜	—	
Կուրսկ—Կիևի	98½	սակ.	
Կալ. փոխադ. վարկի ընկեր. 4½% ընկեր. գրաւաթղթերը	154½	—	
5%	100⅜	—	
Պետերբուրգի քաղ. վարկի ընկ. 5% օբլիգացիան	100½	—	
Մոսկուալի	100½	—	
Օդեսալի 5½%	100⅝	սակ.	
Բիֆլիսի	97½	առք.	
Լէհատտանի կալ. բանկի 5% գրաւաթղթերը	100½	առք.	
Խերսոնի նահանգի կալ. բանկի 5% 5½ գրաւ. թղ.	99½	—	
Խարկովի կալ. բանկի 5%	99⅜	սակ.	
Գալտուալի	99⅜	—	
Ցուլալի	99.	առք.	
Կիևի	99⅜	—	
Մոսկուալի	100	—	
Բեսարաբիա—Ցարիկեան	99½	սակ.	
Նիժն.—Ցմոլեն.	100⅛	—	
Դոնի	99	առք.	
Վիլնալի	99½	—	
Թիֆլիսի 5% և 6%	100½	99	ծախ.
Ռուբնալիսի	100½	99	—
Ակցիաների գները	482	—	
Միջազգային առևտրական	495	սակ.	
» Արտ. առևտր. ռուս. բանկի	312½	—	
Վոլգա-Կամալի առևտրակ.	910	—	
Սիբիրի բանկի.	645	առք.	
Բեսարաբ.—Ցարիկ.	570	ծախ.	
Խարկովի կոլուածական	490	—	
Գետերը.-Ցուլալի	407	—	
Գալտուալի	600	—	
Նիժեգորոդ.-Ցոռմարլի	632	—	
Վիլնալի	598	—	
Դոնի	715	—	
Կիևի	860	—	
Մոսկուալի	600	—	
1827 թ. կրակից ապահովագ. առուաց ընկերութիւն	1230	առք.	
Հիսիս. ապահովագ ընկ.	281	—	
» «Ռոսսիա» » »	320	ծախ.	
Ռուսաց Նաւագնացութեան և առևտրի ընկերութիւն	715	—	
» «Կաւկազ և Մերկուրի» ընկ	378	սակ.	
Ռուս. երկթ. գլխ. ընկեր.	273	—	
Մոսկուա-Բիազանի երկաթ.	474	ծախ.	
Կուրսկ-Կիևի	388	—	
Ռըբինսկ-Ռոլգովի	84	սակ.	
Գրեազ-Ցարից.	158½	—	
Հարաւ-Արեմտեան	113½	—	

Ռուբալի տրամադրութիւնը խիստ թոյլ է։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութեան պ. պ. անդամները հրաւիրւում են հերթական նիստի, որ լինելու է երեքշաբթի, դեկտեմբերի 14-ին, երեկոյեան ժամը 7½-ին։

Պարապմունքի առարկաներն են.

1) Ընթացիկ գործեր։

2) Զեկուցումների քննութիւն 1893 թուին Անդրկովկասում եղած ցանքսերի մասին։

Ներկայ կարող են լինել և կողմնակի անձեր։

—

Մեծապատիւ պ. խմբագիր.

Թէև աւելորդ, սակայն ստիպուած ենք մի երկտողով պատասխանել պատուական «Նոր-Դար»-ի 193 համարում լոյս տեսած պ. Յ. Մ.-Խախտամեանցի անտեղի նամակին։

Անցեալ հոկտեմբերի 16-ին Զարժոյ քաղաքում պատահեցանք պ. Բ. Շահնազարեանցին, որտեղ և պարոնը խնդրեց ինձ, որ լրագրութեան միջոցով բողոքեմ պ. Յ. Մ.-Բախտամեանցի ապօրինի վարմունքի դէմ այն առթիւ, որ փողը ստանում՝ դիրքը չէ ուղարկում. և յետոյ էլ խնդրեց, որ դիրքը պահանջեմ իմ հասցէով ու յետոյ ուղարկեմ իրեն՝ պ. Շահնազարեանին։ Զարգացով պարոնի խնդիրը, մի նամակով դիմեցի պատուական թերթիդ խմբագրութեան, որն և ամենակարճ ժամանակում լոյս տեսաւ «Նոր-Դար»-ի 190 համարում։

Պ. Յ. Մ.-Բախտամեանը, դժուար դրութիւնից ելնելու համար, պատիւ է արել մի չարք անտեղի ոճաբանութիւններով, կեղծուր նախադասութիւններով և անհիմն փաստերով պնդել, որ իբր բարեկամը Թիֆլիսից ուղարկել է պ. Շահնազարեանցին մի հատ «Տանտիկին և խոհանոց» գրքից և մի հատ էլ Լօռու-Մելիքեանի պատկերից...

Ո՛ւմն էք ուզում խաբել, պ. Բախտամեան. եթէ ուղարկել էք՝ ինչու այսքան ժամանակ չստացուեց։ Եթէ ուղարկել էք, խնդրեմ բարեհաճէք հաստատել. լոկ փրազներով բան չի դուրս գալ։

Պ. Բախտամեանցը զարմացած ասում է. «Եթէ գիրքս չէը ստացել, ինչու ապասում էր ամբողջ 3 տարի 3 ամիս. մինչ այդ միջոցին չէը կարող, նոյն ինքը պ. Շահնազարեանը, դիմել նամակով ուղղակի ինձ»։

Պ. Բախտամեան, ինչու էք զարմանում, ինչու չէք մի րոպէ մտածում և յետոյ այդ տողերը գրում. չէ՞ որ դուք Պարիզ լինելով, պ. Շահնազարեանը չգիտէր ձեր հասցէն (Պարիզից գրած նամակի մէջ չէիք գրել ձեր հասցէն). երկրորդ՝ թէ ձրը էք վերադարձել Թիֆլիս, այդ էլ անյայտ էր Շահնազարեանցին և ներկայումս էլ տակաւին անյայտ է նրան ձեր հասցէն։ Ուրեմն էլ ինչպէս կարող էր նամակով ուղղակի դիմել ձեզ։

Եւ ի վերջոյ, պ. Բախտամեանը բարուք է համարել իր նամակի վերջում ցոյց տալու ընթերցող հասարակութեանը իր արժանաւորութիւնը և իմ իբր վատ վարմունքն ասելով. «ցոյց տալու, որ ինձ համար մէկ գիրքը ոչ մի նշանակութիւն չունի, իբրև վարձատրութիւն պ. Խաչատրեանին, որ նա պաշտպանել է պ. Շահնազարեանի դատը, և ինչպէս երեում է իր վարմունքից, որ մեծ ցանկութիւն ունի ունենալ իմ գրքից, այսօրուայ պոստով ուղարկում եմ մի հատ «Տանտիկին և խոհանոց»։

Մեծ խոհեմութիւն արած կըլինէիք, պ. Բախտամեանց, եթէ փոխանակ ձրի ինձ ուղարկելու մէկ հատ գիրք, այդ գիրքը տայիք Թիֆլիսի ձեր այն բարեկամին, որը բարեհաճել է միամտացնել նամակով Պարիզ ձեզ, որ իբր թէ կատարել է ձեր խնդիրքն և պ. Բ. Շահնազարեանի յանձնարարութիւնը...

Իսկ ես այդ գիրքը դեռ ևս չեմ ստացել և եթէ իսկապէս ուղարկել էք, ստանալուց ոչ թէ յետ կուղարկեմ ձեզ, այլ յարդելով ձեր պատիւը, կուղարկեմ պ. Շահնազարեանին, որովհետև ես մինչև այսօր ցանկութիւն չեմ ունեցել ձեր գիրքը կարդալու և այժմս էլ բոլորովին կարօտութիւն չունեմ, առաւել ևս ձրի ձեռք բերելու։

Արդ, Մեծարգոյ խմբագիրը, խոնարհաբար խնդրում եմ մեր սոյն նամակին տեղ տաք համակրելի թերթիդ առաջիկայ համարներից մինում։

Խորին յարգանօք՝

Գ. Ա.. Խաչատրեանց.

Սամարղանդ, 21-ին նոյեմբ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ԹԱՖՖՈՒ ՄԵԾԱԴԻՐ ԳԱՍԿԵՐԸ
100 հատն արժէ . . . . 20 ր. —
50 . . . . . 12 ր. —
1 . . . . . — 30 կ.
Թիֆլիսից դուրս հանապարհածախսով . . . . . — 40 կ.
Եւ չուտով լոյս կըտեսնի
ԲԿՓՐԵԼ ՊԱՏԱՐԱՆԵՑՈՒ ՊԱՏԱԿԵՐԸ
Նոյն դիրքով և արժողութեամբ, օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, Саркису Согомоняцъ.
(000) 10—3

БРОКАРЪ и К°
ИЗОБРѢТАТЕЛЬ
ЦВѢТОЧНАГО
О-ДЕ-КОЛОНА
РАЗНЫХЪ ЦВѢТОЧНЫХЪ ЗАПАХОВЪ.
Этотъ о-де-колонъ употребляется какъ духи, туалетная вода и куренія.
Можно получать во всѣхъ городахъ Россіи у главныхъ торговцевъ.
(М.) 13—15

Магазинъ О. ЗИБЕРТА
7. Дворцовая ул. д Сараджева № 7.
Полученъ большой выборъ
НАСТОЯЩИХЪ
ЯПОНСКИХЪ
издѣлій
АЛЬБОМОВЪ
ИЗДѢЛІЙ ИЗЪ
СЛОНОВОЙ КОСТИ
КОЖИ
и МЕЛЬХІОРА
(273) 15—1

МЕԾԱՔԱՆԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐ
ՍՏԵՓԱՆ ՆԻԿԻՏԻՒԶ ԱԼԵՔՍԷԻԻ
Մոսկուա, Չերկասկի փողոց, տուն Հաջի-Կոնստալի.
Ծախւում են մեծ քանակութեամբ զուլպաներ, ձեռնոցներ, շարֆեր, ըամճկոններ, զօտիներ և ամեն տեսակ ասեղնային և զալանտերէյ իրեղէններ։
(267) 5—3



Թիֆլիսում, Վլորցովայա փողոցում, Կալուածական բանկի շինութեան մէջ, թատրոնի տակը, № 38—39-ում իշխանութեան թոյլտուութեամբ դրուած է ամենօրեայ փոփոխութեամբ ֆոտո-պլաստիքական պատկերների դործիք, որ արտասահմանում կոչւում է
ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՈՐԱՄԱ
(268) կ. Շուց 25—7

«ԿԵՊՐԻԶ ՆԵՐԸՑԻ» — դուբի, օ-դը-կոլոն, օճառ։
«ԿԵՊՐԻԶ ՄԻՒՍԿ» — դուբի, օ-դը-կոլոն, օճառ։
«Ս Ա Փ Օ» — դուբի, օ-դը-կոլոն, օճառ։
Ամենաարժէր յատկութեան
ԵԼԵՒՈՒՐ ԷՄՈԼԻԵՆՏԻՐԸ սենեակները մաքրելու համար, տարածում է հղկելու ախորժելի հոտ
ԸՏԿՄԻ ՑԻՄՈՒԼԵՐՆ ՓՈՇԻ
ԸՏԿՄԻ ՑԻՄՈՒԼԵՐՆ ԷԼԵԿՍԻՐ
Ս.-ՊԵՏԵՐԲ. ՑԵԽՆԻԿՈ-ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ
Գլխաւոր պահեստն և պ. ասիենակը ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Ալէքսանդրինեան թատրոնի հրապարակ. № 9.
Բաժանմունքը ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ Նիկոլաևսկայա, տ. Շերեմետեի։
Գահեյսը ՎԱՐՇԱՒՈՒՄ, Նովիլ Սվետ, № 37. և Կայսրութեան ամենալաւ մագազիններում.
(М). 50—38

Дозв. Цензурою Тифлисъ, 13-го Декабря 1893 г. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.